Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության 2014 թվականի գործունեության

ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչությունը, համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի, ՀՀ տարածքում իրականացնում է տեսչական, ընթացիկ և ըստ անհրաժեշտության ստուգումներ:

1. ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

1. Տեսչության հանձնախմբերը ՀՀ քաղաքաշինության նախարարի «ՀՀ մարզպետարաններում տեսչական ստուգումներ անցկացնելու մասին» հրամանի և ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության պետի հանձնարարագրերի հիման վրա տեսչական ստուգումներ են անցկացրել Հայաստանի Հանրապետության մարզպետարանների քաղաքաշինության վարչություններում:

Տեսչական ստուգումների արդյունքում կազմվել են արձանագրություններ և համապատասխան որոշումներ, որոնցով առաջարկվել է մարզպետերին՝ հատուկ քննարկման առարկա դարձնել տեսչական ստուգման արդյունքները, միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ու իրավախախտումներ թույլ տված պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

2. ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԸՍՏ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

2014 թվականի ընթացքում տեսչության կողմից ստուգվել է 571 օբյեկտ (371-ը՝ 2014 թվականի ծրագրով նախատեսված, իսկ 200-ը՝ ըստ անհրաժեշտության), որից 511-ի նկատմամբ կայացվել է որոշում, իսկ 60-ի նկատմամբ՝ ստուգման տեղեկանք: Կայացրած 511 որոշումներից 469-ի համար նշանակվել է տուգանք, իսկ 42-ի համար տրվել է պարտադիր կատարման ցուցում: Ստուգված օբյեկտներից 74-ում կատարվել են կրկնակի ստուգումներ և կազմվել տեղեկանքներ:

2014 թվականին ստուգումների քանակը կազմել է 645:

ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության կողմից կայացված 469 (որից 18ը՝ պաշտոնատար անձանց (համայնքների ղեկավարների) նկատմամբ) որոշումների արդյունքում 2014 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ նշանակել է 56,350 հազ. դրամ տուգանք:

Նշանակված տուգանքները պետական բյուջե գանձելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ԴԱՀԿ ծառայություն է ներկայացվել 19 գործ:

2014 թվականի ընթացքում իրականացված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են 60 ինքնակամ շինարարության դեպքեր, որոնց մասին տեղեկատվություն է ներկայացվել Երևանի

քաղաքապետարան և համայնքների ղեկավարներին, ինքնակամ շինությունների կասեցման և հետևանքների վերացման վերաբերյալ տրվել են պարտադիր կատարման ցուցումներ:

Շինարարության թույլտվություն տվող իրավասու մարմինների կողմից կառավարության 2002 թվականի փետրվարի 02-ի թիվ 91 որոշման պահանջների համաձայն քաղաքաշինական պետական տեսչություն է ներկայացվել 3095 շինարարության և 96 քանդման թույլտվությանների պատճեններ: